

Հայկական միջնադարը «Մետրոպոլիտեն» թանգարանում

Հարցազրույց Մատենադարանի տնօրեն Վահան Տեր-Ղևոնդյանի, Պատմության թանգարանի տնօրեն Գրիգոր Գրիգորյանի և Մայր Աթոռ Ռուբեն Սևակ թանգարանի տնօրեն Սևակ քահանա Սարիբեկյանի հետ.

- Աշխարհի ամենահեղինակավոր մշակութային օջախներից մեկում՝ Նյու Յորքի «Մետրոպոլիտեն» թանգարանում, սեպտեմբերի 22-ին կայացավ «Հայաստան» խորագրով ցուցահանդես, որտեղ ներկայացվել էին 140 ցուցանմուշներ Մատենադարանից, Հայաստանի պատմության թանգարանից և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Ցուցահանդեսը ներառում էր հայկական մշակույթի միջնադարյան ժամանակաշրջանը՝ 4-17-րդ դարեր: Ինչո՞վ է պայմանավորված այս հետաքրքրությունը և ինչո՞ւ է ընտրվել հատկապես միջնադարը:

Գրիգոր Գրիգորյան. - Նախ՝ թանգարանների համագործակցության պրակտիկայում ցուցահանդեսը կազմակերպող կողմին է պատկանում նյութի նախընտրության իրավունքը: Այս խնդրում վերջինս առաջնորդվում է իր ընթացիկ ծրագրերի տրամաբանությամբ և իր այցելուների նախասիրությունների և սպասումների ճշգրիտ հաշվարկով՝ ապահովելու հնարավորինս մեծաքանակ մուտքեր: Այս նկատառումով էլ արված է «Հայաստան» ցուցահանդեսի գլխավոր համադրողի՝ Հելեն Էվանսի ընտրությունը, ով բյուզանդագետ է, հայկական մշակույթի միջնադարյան շրջանին՝ հատկապես ձեռագրերին քաջածանոթ գիտնական, ով ի գորու է և իրավասու IV –XVII դարերի մշակույթի համայնապատկերում վեր հանել ու ընդգծել հայկական մշակույթի ինքնության առանձնահատկությունները: Այս մտահղացքով է կատարված ցուցահանդեսում ներկայացված՝ Մատենադարանից, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից և Հայաստանի պատմության թանգարանից փոխառված նյութի ընտրությունը: Այն է՝ ի ցույց դնել հայկական մշակույթի անշփոթելի ինքնությունը և ավանդը համաշխարհային քաղաքակրթության մեջ:

Տեր Սևակ. - Հայ միջնադարյան արվեստն իր ճարտարապետական, գեղագիտական նրբություններով ամբողջությամբ քրիստոնեական է և լինելով առաջին քրիստոնեացած երկիր՝ ոչ միայն անմասն չմնաց միջնադարյան քրիստոնեական մշակույթից, այլ, ընդհակառակը, ձևավորեց մի ինքնուրույն, հարուստ ժառանգություն՝ սկսյալ քառակող

կոթողներից, սրբոց մասունքների պահարաններից, Դվինից և Անիին հասած կիրառական և հաստոցային առարկաներից, ճարտարապետական և խաչքարային արվեստից, Կիլիկյան Հայքի նրբագեղ մանրանկարներից և ոսկերչական առարկաներից, որ նախահիմք դարձան եվրոպական վերածնունդին: Հայ հզոր առևտրականների շնորհիվ, որ մի տեսակ մշակութային միջանցք էին ապահովում միջնադարյան Եվրոպայի և Արևելյան երկրների միջև, հայոց գրատպությունը ԺԶ դարից սկսյալ աշխարհում առաջիններից տարածվեց տարբեր ծագերում՝ Ամստերդամից հասնելով մինչև Հնդկաստան: Հիշելի են նաև հայկական խեցին, գործվածքներն ու եկեղեցական հանդերձանքը: Եվ այս ամենն անթաքույց կերպով կան ի շարս հռոմեաբյուզանդական և եվրոպաան մշակույթի կողքին՝ որպես ինքնատիպ և ինքնուրույն ճյուղ և արվեստ:

Վ. Տեր-Ղևոնդյան. - Նախ նշենք, որ բացի արդեն հիշատակված հայաստանյան երեք հաստատություններից, իրենց մասնակցությունն են բերել նաև Երուսաղեմի Հայոց պատրիարքարանը, Վենետիկի Մխիթարյան միաբանությունը, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը և մի ամբողջ շարք մեծ ու փոքր թանգարաններ և անհատական հավաքածուներ Եվրոպայից, ԱՄՆ-ից ու Մերձավոր Արևելքից:

Այսպիսի ցուցադրություն ԱՄՆ-ում երբեք չի եղել, թեև «Մետրոպոլիտեն» թանգարանը դեռևս 15-20 տարի առաջ ունեցել է նման մտադրություն: Սակայն վերջին 4-5 տարում արդեն հայկական կողմի ջանքերով է, որ այդ գաղափարը գործնական ընթացք ստացավ և, ի վերջո, իրականացավ: Ցուցադրության շեշտադրությունը հայկական քրիստոնեական մշակույթն է: Հենց սկզբից շեշտվում է, որ Հայաստանը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունած առաջին երկիրն է: Այդ նույն տրամաբանությամբ էլ ներկայացված են ցուցանմուշները 4-5-րդ դարերից մինչև 17-18-րդ դարեր: Ցուցադրության համադրող բյուզանդագետ, հայագետ Հելեն Էվանսը տարիներ առաջ աշխատել է Մատենադարանում և գիտական աշխատություն է գրել՝ նվիրված հայկական մանրանկարչությանը: Չէի ցանկանա ցուցադրությունն ու հայկական մշակույթի ընտրված ժամանակահատվածը կապել միայն մեկ անձի գործոնի հետ, բայց Հելեն Էվանսի դերը մեծ է եղել այս գործում: Կարծում եմ՝ այս ցուցադրությունը հաջողված էր նաև այն առումով, որ համադրողները ցույց տվեցին հայկական մշակույթի դերն ու

նշանակությունը քրիստոնեական համատեքստում և, մյուս կողմից՝ հայկական մշակույթի՝ մանրանկարչության, ձեռագրական արվեստի, արձանագործության, խաչքարերի, սուրբ մասունքների յուրօրինակությունն ու ինքնատիպությունը: Այստեղ Հայաստանն ու հայկական մշակույթը դիտարկված են Բյուզանդիայի, Մերձավոր Արևելքի, Չինաստանի, Հնդկաստանի և այլ երկրների հետ ունեցած առևտրական և մշակութային բազմաբնույթ կապերի, առնչությունների համատեքստում:

- **Ընդհանուր առմամբ ինչպե՞ս ընթացավ ցուցադրությունը, ի՞նչ արձագանքներ եղան, համագործակցության նոր առաջարկներ եղա՞ն:**

Գրիգոր Գրիգորյան. - Վաղ է խոսել այդ մասին, քանի որ ցուցահանդեսի տևողությունը, ինչպես գիտեք, նախանշված է 2018թ սեպտեմբերի 21-ից մինչև 2019թ. հունվարի 13-ը: Ավարտվելուց հետո մենք՝ Մետրոպոլիտենի թանգարանի հետ կնքված պայմանագրով, կստանանք ցուցահանդեսի հետ կապված ամբողջ մամուլը: Առայժմ դատելով հրապարակված նյութերից՝ կարելի է միանշանակ արձանագրել բացառիկ հաջողության փաստը:

Վ. Տեր-Ղևոնդյան. - Համենայն դեպս, սկզբնական օրերի հսկայական հոսքին ինքներս ենք ականատես եղել, և եթե այդ նույն միտումը պահպանվի, ապա ցուցահանդես կայցելի շուրջ մեկ միլիոն մարդ (համեմատության համար ասեմ, որ 2017-ին Մատենադարան է այցելել 108 հազար այցելու): Արդեն իսկ տպված են հոդվածներ «Նյու Յորք Թայմզ», «Վաշինգտոն Փոստ», «Հերալդ Թրիբյուն» թերթերում, որտեղ շատ բարձր է գնահատված «Հայաստան» ցուցադրությունը: Հայկական ցուցանմուշների ցուցադրության համար հատկացված է 2000 քառակուսի մետր տարածք, որն, ըստ նյութի և ժամանակաշրջանների, շարժական պատերով բաժանված է 7-8 սրահների. վերջին սրահում ուշ միջնադարյան ցուցանմուշներն են, այդ թվում հնատիպ գրքերը:

Ինչ վերաբերում է համագործակցության նոր առաջարկներին, ապա նման ցուցադրությունների պարագայում ռեալ չէ մեկ տարի անց նոր բան կազմակերպելը: Այո, առայժմ վաղ է խոսել այդ մասշտաբի նոր ցուցադրության մասին:

- **Որքան հայտնի է՝ ցուցադրության ֆինանսական ծախսերը հոգացել է հյուրընկալող կողմը:**

Վ. Տեր-Ղևոնդյան - Ծախսերի զգալի մասը՝ և՛ ցուցադրության ծախսերը, և՛ ցուցանմուշների ապահովագրման ու տեղափոխման, և՛ կատալոգի հրատարակման համար, արվել է ամերիկյան և հատկապես ամերիկահայ տարբեր կազմակերպությունների և անհատների՝ առաջին հերթին Հակոբ Գևորգյան ֆոնդի, ինչպես նաև Նյու Յորքի Կարնեգի հաստատության, Հայ բարեգործական ընդհանուր միության, Գիորգի ընտանեկան հիմնադրամի, Կարագյոզյան հաստատության, Նազար և Արտեմիս Նազարյաններ Ընտանիքի, Կուլիանջյան ընտանիքի, Հրայր Հովնանյանի, Ռուբեն Վարդանյանի, Ասո Դավիդյանի, Դոլորես Զոհրաբ Լիբման հիմնադրամի և ուրիշների նվիրատվություններով: Առանց այս հաստատությունների և առանձին անհատ ներդրողների օգնության այս ցուցադրությունը չէր կայանա: Ի դեպ, նշեմ, որ բացի հայաստանյան և սփյուռքյան վեց խոշոր հաստատություններից 1-2-ական նմուշներ բերված էին Լոս Անջելեսի «Գեթթի», Լիսաբոնի «Գալուստ Գյուլբենկյան», Բոստոնի, Դիտրոյթի և մի շարք այլ թանգարաններից:

Հետաքրքիր էր որ նույն գրչության կենտրոնում ստեղծված, կամ նույն մանրանկարչի ձեռքով նկարագարդված, բայց տարբեր, երբեմն իրարից հազարավոր կիլոմետրեր հեռու տեղերում պահվող ձեռագրերը այստեղ հայտնվել էին կողք-կողքի: Օրինակ, մենք Մատենադարանից տարել էինք Սարգիս Պիծակի մանրանկարներով մի ձեռագիր, Սարգիս Պիծակի մեկ այլ ձեռագիր մատյան բերվել էր Վենետիկի Մխիթարյան միաբանությունից, և այդ երկու մատյանները «Մետրոպոլիտենում» հայտնվել էին կողք-կողքի, ինչը էմոցիոնալ յուրահասակություն հաղորդեց ցուցադրությանը: Նաև՝ անհատական հավաքածուներից բացառիկ նմուշներ կային, օրինակ՝ առաջին անգամ ցուցադրվեց Մշո Սուրբ Կարապետ վանքի 13-րդ դարի փայտե դուռը:

- Ինչպե՞ս է այդ դուռը հայտնվել անհատական հավաքածուում:

Ազգությամբ հա՞յ է:

Վ. Տեր-Ղևոնդյան - Ոչ հայ չէ: Համեմատաբար վերջին տարիներին այդ դուռը դրվել էր աճուրդի: Հայ անհատները կամ կազմակերպությունները, ցավոք, այն չէին գնել, և այս բացառիկ նմուշը հայտնվել էր մեզ անհայտ մի անձի անհատական հավաքածուում, որը բարեբախտաբար նման պարագայում համաձայնվել էր այն տրամադրել ցուցադրության համար:

- Հելեն Էվանսը, ցուցադրության շրջանակներում խոսելով հայկական մշակույթի մասին, նշեց, որ Հայաստանի վերահսկումը առևտրային ճանապարհներին տարածաշրջան բերեց հայերեն տպագիր գրքեր և որ, առհասարակ, Հայաստանը կարևոր գործոն էր ոչ միայն առևտրաշրջանառության, այլև մշակույթների փոխազդեցությունների տեսակետից: Ինչու՞ էր Հելեն Էվանսը շեշտում այդ փաստը, ինչու՞ վ էր դա պայմանավորված:

Տեր Սևակ - Հելեն Էվանսի համար հետաքրքրության առիթ էր հանդիսացել տարբեր քարտեզներում նշվող հայ առևտրականների վերահսկումը առևտրային ճանապարհներին, կիլիկյան մանրանկարներում նկարված և այդ օրերում օգտագործված տարբեր չինական և եվրոպական կտորները և դրանց համադրությունը: Հայաստանը, լինելով միջանցք Եվրոպայի և Ասիայի միջև, կարևոր գործոն էր ոչ միայն առևտրաշրջանառության, այլև մշակույթների փոխազդեցությունների միջև, իսկ Հայ Եկեղեցին, ունենալով բազում թևեր հզոր առևտրային քաղաքներում, ուներ նաև կանոնակարգված ծուխ և համայնք, ինչը հեշտացնում էին հայ առևտրականների տեղաշարժերը:

Վ. Տեր-Ղևոնդյան - Հայկական գործոնը, թեկուզ առանց պետականության, բայց բավականին լուրջ դեր է խաղացել ոչ միայն միջազգային առևտրի մեջ: Խոսենք օրինակներով՝ Նոր Ջուղան սուկ քաղաք չէր իր հարակից գյուղերով: Նոր Ջուղայի բնակիչները, ունենալով առևտրային հարաբերություններ ու նաև որոշակի արտոնություններ, հսկայական կապիտալ կուտակեցին, և երբ Իրանում քաղաքական իրավիճակը վատացավ, նրանց մի մասը տեղափոխվեց այլ երկրներ, որոնց հետ նախկինում էլ առևտրային կապեր ունեին՝ հիմնելով հնդկահայ, հոլանդահայ, ռուսահայ, իտալահայ գաղութները, որտեղ նրանք լուսավորչական և մշակութային լայն գործունեություն ծավալեցին: Վերջիվերջո, ուշ միջնադարի՝ 16-17-18-րդ դարերի ձեռքբերումները, մշակութային հաջողությունները կապվում են հայ վաճառականների անվան հետ: Նրանք հիմնեցին տպարաններ, դպրոցներ, կառուցեցին եկեղեցիներ:

Վերջերս Մատենադարանում հայ-ֆրանսիական կապերին նվիրված ցուցադրություն եղավ, որը պատմում էր նաև Ֆրանսիայում այդ նույն դարերում տարածված «հայասիրության» ալիքի կամ այսպես կոչված հայկական նորաձևության մասին: Օրինակ՝ պահպանվել է Ժան-Ժակ

Ռուսոյի նկարը հայկական տարագով: Դժվար է ասել, թե դա տիպիկ հայկական տարագն է, բայց տարածողները եղել են հայ վաճառականները: Նույն հայ վաճառականների դեգերումների շնորհիվ է, որ Արևմտյան Եվրոպայի մի շարք քաղաքներում բացվեցին առաջին սրճարանները, կամ՝ մետաքսը հայտնվեց Հարավային Ֆրանսիայում: Դարձյալ հայ վաճառականների աջակցությամբ էր, որ 1666-1668 թթ. Ոսկան Երևանցու ջանքերով Ամստերդամում հրատարակվեց առաջին տպագիր հայերեն Աստվածաշունչը 5000-ի հասնող՝ այն ժամանակվա համար ֆանտաստիկ տպաքանակով, որտեղ օգտագործված են գերմանացի և հոլանդացի լավագույն նկարիչների աստվածաշնչյան պատկերազարդումները: Հետագայում այնտեղ տպագրվեց նաև Երկրագնդի հայերեն առաջին քարտեզը, ինչը նույնպես հայ վաճառականների մեծ ներդրումների արդյունքն է: Այդ վաճառականները մի կողմից հայկական մշակույթին, դպրոցին հսկայական աջակցություն էին ցույց տալիս, մյուս կողմից կապող օղակ դառնում հայերի և արևմտաեվրոպական ժողովուրդների, Հնդկաստանի, Անգլիայի, Ռուսաստանի միջև:

- Ի՞նչ բարեբախտություն էր, որ միջնադարում ունեինք այդպիսի վաճառականներ, որոնք գիտակցում և կատարում էին այդպիսի մեծ լուսավորչական գործունեություն:

Վ. Տեր-Ղևոնդյան - Երանի այսօրվա մեծահարուստները միջնադարյան մեծահարուստների գոնե կեսի չափ ունենային նվիրում և ազգային մշակույթի գիտակցություն:

- Ի՞նչ էք կարծում՝ պետական մշակութային օրենսդրական քաղաքականությամբ հնարավո՞ր է ֆինանսական մեծ ռեսուրսներ ունեցող անհատներին առաջարկել մշակութային ոլորտներում նպատակային ներդրումներ անել:

Վ. Տեր-Ղևոնդյան - Օրենսդրական բարեփոխումներով, իհարկե, հնարավոր է: Օրինակ, ԱՄՆ-ում հսկայական միջոցներ են ներդրվում մշակույթի, կրթության, գիտության և առողջապահության բնագավառներում: Այնտեղ օրենքը թույլ է տալիս այդ բնագավառներում բարեգործական ծրագրեր իրականացնելու պարագայում այդ նույն չափով նվազեցնել իրենց վճարելիք հարկերը: Եթե Հայաստանում ևս

նպաստավոր պայմաններ ստեղծվեն՝ բարեգործությունը կատանա երկարաժամկետ բնույթ, կստեղծվեն այսպես կոչված մնայուն, անձեռնմխելի ֆոնդեր, որոնց մայր գումարը կմնա անձեռնմխելի, իսկ տարեկան տոկոսները երկար ժամանակով կօգտագործվեն որոշակի նպատակի համար: Մեզ նման ոչ հարուստ երկրի համար սա միակ ուղին է աջակցելու համար գիտական կենտրոններին, թանգարաններին, համալսարաններին և առողջապահական հիմնարկներին:

Օրինակ, Մատենադարանում տարեկան 10-15 գիրք ենք հրատարակում: Դրանք հիմնականում գիտական մենագրություններ են: Միաժամանակ անհրաժեշտություն է գունավոր պատկերներով և տպագրական բարձր որակով ալբոմների հրատարակությունը: Բայց նման մեկ ալբոմի հրատարակությունը կխլի 10 մենագրության գումար՝ մեզ զրկելով ուսումնասիրողների տարիների հետազոտական աշխատանքի արդյունքը հրապարակելու հնարավորությունից: Ուստի ակնհայտ է, որ նման ալբոմների համար անխուսափելիորեն պետք է դիմենք անհատ բարերարներին կամ բարեսիրական կազմակերպություններին:

Նույնը վերաբերում է օրինակ վերականգնման աշխատանքներին:

Մատենադարանում գործում է միջազգային մակարդակի ռեստավրացիայի բաժին, որտեղ աշխատում են բարձրակարգ մասնագետներ: Ցավոք, հայաստանյան որևէ ԲՈՒՀ-ում չկա ռեստավրացիայի բաժին, որտեղ կարելի է ձեռք բերել այս մասնագիտությունը և տարբեր մասնագիտության տեր մարդիկ՝ քիմիկոսներ, կենսաբաններ, նկարիչներ հենց տեղում՝

Մատենադարանում, տարիների ընթացքում, ավագ գործընկերների աջակցությամբ և սեփական փորձով հմտանում են ու յուրացնում այդ մասնագիտությունը: Մեր ունեցած բյուջեի սահմաններում, տարեկան վերականգնվում է որոշակի թվով ձեռագիր ու վավերագիր: Բայց կան վերականգնման կարիք ունեցող խոշոր չափերի և արժեքավոր ձեռագրեր, որոնց վերականգնման աշխատանքների վրա կծախսվեն 10 «սովորական» ձեռագրերի համար նախատեսված գումար և այդ գումարը, որ կարող է հասնել տասնյակ հազարավոր դոլարների, բնականաբար, դուրս է մեր բյուջեի հնարավորություններից: Ահա այստեղ ևս անհրաժեշտ է բարերարների աջակցությունը, որի լավագույն ձևը ինչպես արդեն նշեցի, մնայուն, անձեռնմխելի ֆոնդերն են: Էլ չեմ խոսում տարբեր անհատների կողմից վաճառվող կամ աճուրդներում վաճառքի դրվող

ձեռագրերի ու վավերագրերի մասին, որոնք եթե հենց այդ պահին ձեռք չբերվեն՝ անցնում են անհայտ մարդկանց ու ցրվում աշխարհով մեկ:

- Հնարավոր չէ՞ մտածել այնպիսի ծրագրեր, որոնք Մատենադարանը կդարձնեն ինքնաբավ կառույց:

Վ. Տեր-Ղևոնդյան - Մոտ ապագայի համար դա իրատեսական չէ: Տոմսերի վաճառքը և ընդհանրապես արտաբյուջետային մուտքերը հասնում են մեր ծախսերի հազիվ մեկ քառորդին: Հետևաբար, առանց պետական ֆինանսավորման և ընդհանրապես պետական լուրջ հոգածության ու աջակցության մենք վտանգի տակ կդնենք մեր ազգային մեծագույն արժեքները: Մատենադարանը հսկա համալիր է, և միայն հսկողությունը, ամռանը զովացնելը, ձմռանը ջեռուցելը, մաքրությունը, շրջակայքի պահպանությունն ու բարեկարգումը, աշխատավարձերն /Մատենադարանը 340 աշխատող ունի/ արդեն իսկ մեծ ծախսեր են պահանջում: Իհարկե, դիմում ենք նաև դրամաշնորհների համար, և այդ գումարները ծախսվում են շատ կոնկրետ, թեմատիկ հարցերի լուծման համար: Կոմերցիոն ծրագրերի իրականացումը բարդ է, որովհետև, վերջիվերջո, սա գիտական հիմնարկ է, և աշխատում ենք ընդունելի սահմանը չանցնել. մենք չենք կարող մեր նիստերի դահլիճը տրամադրել, ասենք, գինու շնորհանդես անցկացնելու կամ համերգ կազմակերպելու համար: Ինչ վերաբերում է տոմսերի վաճառքին, ապա այստեղ ևս սահմանափակումներ կան: Եվրոպայից կամ ԱՄՆ-ից ժամանած զբոսաշրջիկի համար առանձնապես տարբերություն չկա՝ երկու դուլար կվճարի, թե՛ չորս: Բայց Հայաստանի քաղաքացիների համար, դա մեծ նշանակություն ունի: Միաժամանակ, արտասահմանցիների և ՀՀ քաղաքացիների համար տարբեր գներ սահմանելը ճիշտ չեմ համարում:

Հարցազրույցը՝ Մարինա Բաղդազյուլյանի